

ՈՍԿԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՓԱՔՅԱՆ

# ՔԱՐՈԶ

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

«Որ կգիտութիւն քո կերկնային և կիոգևոր կիմաստութիւն առատապէս ծաւալեցեր յեկեղեցիս Հայաստանեայց ի ձեռն սրբոց թարգմանչացն» (Շարական):

Սրբազան շարականագիրը այս խոսքերով նշել է այն, ինչ որ կատարեցին մեր թարգմանիչ հայրերը հինգերորդ դարում, հայ ժողովրդի համար: Հոկտեմբեր ամսվա երկրորդ կիրակին նախորդող շաբաթ օրը թարգմանչաց տոնն է հայ ժողովրդի համար: Այսինքն երեկ Հայաստանյաց Եկեղեցին տոնեց սուրբ թարգմանիչների տոնը: Մի խումբ հայ մարդիկ, մի խումբ հայ հոգևորականներ, որոնք ունեցան Աստվածային գորութիւն և Աստվածային իմաստութիւն: Նրանց գլխավորն ու առաջնորդն էր Մեսրոպ Մաշտոցը: Ինչպես ասում է Սողոմոն Իմաստունը «Առակաց» գրքում Աստվածային իմաստությունը ճանաչողների մասին. «Զի տացէ անմեղաց կիտրագիտութիւն, մանկանց տղայոց կիտս և կիանճար. Որոց իբրև լուիցէ իմաստունն՝ իմաստնագոյն լիցի, իսկ որ հանճարեղն իցէ, կառաջնորդութիւն ստացցի» («Առակք Սողոմոնի» Ա 4—5):

Նա ապրեց սահմանափակ այս միջավայրի մեջ, աղոթեց այս սուրբ խորանի առաջ, իր հավատքն առ բարձրյալն Աստված ներշնչված էր Միածնաէջ սուրբ խորանից և իր մեծ հավատքն ու սերը իր ժողովրդի հանդեպ դարձան խթանիչ ուժը, որով նա ձգտեց, որ Քրիստոսի Ավետարանը ապա խոսի ի՛ր ժողովրդին հայերեն: Ընկալած էր հայ ժողովուրդը քրիստոնեությունը, բայց նման առավոտյան մթնշաղի, խարխափում էր քրիստոնեական հավատքի մեջ, չէր տեսնում Քրիստոսի Ավետարանը իր ամբողջ լույսով: Արև պետք է ծագեր, որպեսզի նա տեսներ հստակ և հավատար ամուր: Եվ ահա Մեսրոպ Մաշտոցի հավատավոր հոգին լեցված երկնային իմաստությամբ ու Աստվածային գիտությամբ, ունեցավ սանձահատուն խորհուրդը՝ հայ ժողովրդի համար գտնելու հայոց այբուբենը՝ Աստվածային շնորհը պարգևելու հայ ժողովրդին, ինչպես շարականագիրն է ասում. «Որ զշնորհս Աստուածային առ ի վերուստ իջեալ յերկնից, պարգևեցեր հիւսիսականացս, ի ձեռն սուրբ վարդապետին...» (Շարական): Թարգմանիչները՝ գլխավորությամբ Սահակ Պարթև Հայրապետին, ավելի ամրակուռ հաստատեցին

Սուրբ Գրիգոր Լուսավորչի Աթոռը, ավելի կարգացրին Հայ Եկեղեցին. «Որ նորափետուր բանիւ կարդարեալ պայծառապգեցան եկեղեցիք հայաստանեայց» (Շարական): Ահա վկայությունները սրբական շարականագրին և կենդանի վկաները՝ մենք, որ այսօր աղոթում ենք այս սուրբ տաճարի մեջ, ուր ինքը՝ Մեսրոպ Մաշտոց ներշնչվեց և ընկալեց Աստվածային գիտությունը և երկնային իմաստությունը: Սիրելի հավատացյալներ, անոնք ոչ միայն հաստատեցին Սուրբ Գրիգոր Լուսավորչի Աթոռը և նորափետուր կարդարեցին Հայոց Եկեղեցին, այլև տվին հաղթանակի միջոցը բազմաչարչար հայ ժողովրդին, որպեսզի նա քայլե դեպի հավիտենականություն: Ասում ենք, և միշտ ասել ենք, հայ գիրը մեծագույն վենքն է, որ պաշտպանում է հայ ժողովուրդը, և այսօր հայ գիրը, աշխարհով մեկ մեր ազգի կավակներին կարող է տալ հավիտենականություն, եթե նրանք հավատքով, սիրով և գուրգուրանքով ապավինեն դրան:

Մենք՝ հայ ժողովոդի 20-րդ դարու կավակները, ունենք հավատքը, որ հրաշքով և Մեսրոպ Մաշտոցի ձեռամբ ստեղծվեցին հայ տառերը և թարգմանիչների միջոցավ՝ հայոց գրականությունը, որոնք կմեկ պիտի առաջնորդեն դեպի հավիտենականություն: Ունենք հավատքը, որ մեր թարգմանիչ հայրերը սուրբեր էին և նրանք կան և կապրին և նրանց հոգիները այսօր սավառնում են Հայաստանի վրա և երջանիկ են: Ինչո՞ւ պիտի երջանիկ չլինի Սուրբ Սահակ Հայրապետին հոգին, տեսնելով հայոց ծաղկյալ Ամենայն Հայոց Հայրապետությունը և Կաթողիկոսարանը: Ինչո՞ւ հրճված չլինի Մեսրոպի հոգին, տեսնելով հայոց նոր Մատենադարանը, նորոգ Երևանը: Ինչո՞ւ հրճված չլինի Եղնիկը տեսնելով Հայաստանի Ակադեմիան, ինչո՞ւ հրճված չլինի Եղիշեն, տեսնելով Երևանի համալսարանը: Ահա, սիրելիներ, հայրենաբնակ հայ ժողովուրդը կապրի այս բոլորի մեջ և վայելում է այս բոլորը: Միշտ փառք տալով մեր թարգմանիչ հայրերին, ապրենք նրանց ոգով՝ մեր հոգին լեցված մեր հայրերի տեսիլքով, իսկ միտքը՝ նրանց գիտությամբ և երկնային իմաստությամբ, որպեսզի առաջնորդենք մեր ժողովուրդը դեպի հավիտենականություն, ամեն: